ըոս և Ռուբէն Ռ. որդւովքն, և տա-
ըան 'ի Կոստանդնուպոլիս։ Եւ վասն քա-
ջութեանն Ռուբենի զաչսն կուրացուցին։
Եւ Լէոն յարդելանս վախճանեցաւ։ Եւ
յետ Լ. ամաց՝ իշխանքն Հայոց դեսպա-
նքս առաքեալ առ Թագաւորն Յունաց՝
խնդրեցին զԹորոս և ետ նոցա։

Թորոս՝ որդի Լէոնի՝ եկն 'ի Կոս-
տանդնուպոլիս, և նորոգեաց զիշխանու-
թիւնն Հայոց։ Սա յաւելաւ իշխանու-
թեամբ Տարսոնի՝ Մասիսոյ՝ Փոքրիոյ և
Ենարզաբայի և Սաւրիոյ կողմանցն. զոր
էառ 'ի Յունաց։ Եւ լուեալ Կայսրն
Յունաց Մանուէլ, զԵնդրոնիկէ զորա-
զլուխն իւր առաքեաց ծանր զօրօք 'ի
վերայ Թորոսին։ Իսկ Թորոս ելեալ ընդ
առաջ նոցա՝ կոտորեաց զՅոյնսն. և առ
եալ զկազմուած բանակին՝ դառնայր ա-
բիական անուամբ։ Եւ զգերիսն 'ի պատ-
ուաւորացն 'ի վաճառ յուղարկէր 'ի բա-
նակն, և զգինս նոցունց իւր զօրացն շնոր-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան